Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հրահանգ №1-22 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին կից տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք X նշանը, ապա նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Որտե՞ղ է գտնվում Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան:

ա) Վանա լճի ափին,

բ) Տիգրիս գետի ափին,

գ) Զագրոսի լեռներում,

դ) Իրանի սարահարթում:

(1) **2. Ո՞ր հույն մատենագիրն է պատմում Պելոպոնեսյան պատերազմի մասին:**

ա) Թուկիդիդեսը,

բ) Հեկաթեոս Միլետացին,

գ) Ապպիանոսը,

դ) Հովսեփոս Ֆլավիոսը:

(1) 3. Հռոմում Տրայանոս կայսեր օրոք ի պատիվ ինչի՞ է կանգնեցվել Հաղթական սյունը:

ա) քաղաքացիական պատերազմի ավարտի,

բ) դակերին պարտության մատնելու,

գ) Եգիպտոսը միավորելու,

դ) Ակցիումի նկատմամբ հաղթանակի:

(1) **4. Թվարկածներից ո՞րն է կապված VI-VII դարերի սահմանագծում գործունեություն վարող Քարթլիի էրիսմթավարի՝ Ստեփանոզ I-ի հետ:**

ա) Ուփլիսցիխեի ազատագրումը,

բ) Մցխեթայի Ջվարի վանքի կառուցումը,

գ) արաբների արշավանքի պարտությունը Սամգորիում,

դ) կաթողիկոսության հաստատումը Քարթլիում:

(1) **5. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ XI դարում սելջուկների արշավանքների մասին:**

ա) Իրանական պետությունը կործանելուց հետո գրավեցին Միջագետքը, Փոքր Ասիան: Անգորայի ճակատամարտում պարտության մատնեցին բյուզանդացիներին և պաշարեցին Նիկիան:

բ) Իրանի տարածքը գրավելուց հետո շարունակեցին արշավանքը: Հարձակվեցին Բյուզանդական կայսրության վրա, պարտության մատնեցին Մանազկերտի ճակատամարտում և տիրացան կայսրության արևելյան գավառներին:

գ) Արաբական թերակղզին նվաճելիս նրանք գրավեցին ու կողոպտեցին Դամասկոսը: Այնուհետև շարունակեցին իրենց արշավանքը դեպի Եգիպտոս և Ասուանի ճակատամարտում պարտության մատնեցին խալիֆին:

դ) Արաբիան և Միջագետքը նվաճելուց հետո հարձակվեցին խարիջիտների պետության վրա: Հաղթանակ տարան Հաթթինի ճակատամարտում և տիրացան Սինայի թերակղզուն:

(1) **6. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ Իոանե Պետրիծիի մասին:**

ա) Գործունեություն էր վարում Գելաթիի ակադեմիայում:

բ) Ստեղծել է Դավիթ Գարեջիի Տիպիկոնը:

գ) Հիմնադրել է Զարզմայի վանքը:

դ) Գլխավորել է դեսպանությունը Հռոմի պապի մոտ:

(1) **7. Վրաստանի պատմությանն առնչվող ո՞ր իրադարձության մասին է տեղեկություններ հաղորդում XII դարի հեղինակ Վալտեր Գոթիեն:**

ա) Օրբելիների դավադրության,

բ) Դիդգորիի ճակատամարտի,

գ) Թողրուլ Բեկի արշավանքի,

դ) Ղութլու Արսլանի խռովության:

(1) **8. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ Թովմա Աքվինացու գործունեության մասին:**

ա) Օգտագործել է Արիստոտելի գաղափարները՝ հիմնավորելու քրիստոնեական վարդապետության ճշմարտացիությունը:

բ) Ուսումնասիրել է դիոֆիզիտական և մոնոֆիզիտական վարդապետությունների դոգմաները և վերացրել դրանց միջև եղած կանոնական հակասությունները:

գ) Հետազոտել է Հռոմի Պապի գրասենյակում պահվող պատմական փաստաթղթերը և հաստատել դրանցից մի քանիսի կեղծ լինելը:

դ) Կաթոլիկ աշխարհում սրբերի կյանքի օրինակների համաձայն հիմք է դրել վանական կյանքին:

(1) 9. Վրացական ճարտարապետության ո՞ր հուշարձանն է կառուցվել XII-XIII դարերում:

ա) Բոլնիսիի Սիոնին,

բ) Անանուրիի ամրոցը,

գ) Ղինծվիսիի վանքը,

դ) Բագրատի տաճարը:

(1) **10. Թվարկվածներից ո՞ր փաստն է ճիշտ մոնղոլների նվաճումների վերաբերյալ:**

ա) Բաթու խանը պարտության մատնեց մամլուքներին և գրավեց Երուսաղեմը:

բ) Հուլավու խանը նվաճեց Բաղդադը և մահապատժի ենթարկեց խալիֆին:

գ) Չինգիզ խանը արշավեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպա և հիմնեց Ոսկե Հորդան:

դ) Բերքա խանը ենթարկեցրեց Չինաստանը և հիմք դրեց Մոնղոլական կայսրությանը:

(1) **11. Ո՞ր հիմնավորումը *ճիշտ չէ* «Հարյուրամյա պատերազմի» մասին:**

ա) Կրեսի ճակատամարտում անգլիացիները հաղթանակ տարան ֆրանսիական զորքի նկատմամբ, որի հրամանատարն էր Ֆիլիպ VI թագավորը:

բ) Անգլիայի թագավոր Էդուարդ III-ը երկարատև պաշարումից հետո գրավեց ֆրանսիական կարևոր նավահանգստային քաղաքը՝ Կալենն:

գ) Ֆրանսիայի թագավոր Ժան II Բարին պարտվեց Պուատիեի ճակատամարտում և գերևարվեց անգլիացիների կողմից:

դ) Ազենկուրի ճակատամարտում ձեռք բերված հաջողությունից հետո Շառլ VII-ը վերջնականապես վտարեց անգլիացիներին Ֆրանսիայից:

(1) **12. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ Ջեհան շահի արշավանքի մասին:**

ա) Անսպասելիորեն հարձակվեց Վրաստանի վրա, գրավեց և թալանեց Սամշվիլդեն և Թբիլիսին:

բ) Նախիդուրիի ճակատամարտում տարած հաղթանակից հետո գրավեց Դմանիսի և Լոռի բերդերը:

գ) Օգտվելով Վրաստանի թագավորի երկրից բացակայությունից, գրավեց Քութաիսին և ասպատակեց Բագրատի տաճարը:

դ) Շիրվանից ներխուժեց Կախեթի, գրավեց Գրեմին ու Զեգամին, այնտեղից Իրան վերաբնակեցրեց վաճառականներին ու արհեստավորներին:

(1) **13. Թվարկածներից ո՞րն է կապված Սամցխեի աթաբագ Մանուչար II-ի հետ:**

ա) Պայքար օսմանյան զավթիչների դեմ:

բ) Վրաստանի թագավոր Գիորգի VIII-ի գերևարումը:

գ) Իլխանների խանության հովանու ներքո անցնելը:

դ) Կոստանդին XI կայսրին ռազմական օգնություն ցուցաբերելը:

(1) **14. Ո՞ր պնդումն է ճիշտ Վենետիկի Հանրապետության մասին:**

ա) Երկարատև պայքարից հետո Վենետիկը կարողացավ միավորել Իտալիայի բոլոր քաղաքական միավորները, բացառությամբ Հռոմի պապի մարզի:

բ) Վենետիկցիները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Աշխարհագրական մեծ հայտնագործություններին և վենետիկյան գաղութներ հիմնեցին Հյուսիսային Ամերիկայում:

գ) Վենետիկը դարավոր հակամարտության մեջ էր ներքաշված Օսմանյան կայսրության հետ, որի հետ պայքարում վերջնականապես կորցրեց Կրետե կղզին1

դ) Վենետիկցիները վճռորոշ դեր խաղացին Գրանադայի էմիրության կործանման գործում և նրա փոխարեն հիմնեցին Լատինական կայսրությունը:

(1) **15. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ Թեյմուրազ II-ի մասին:**

ա) Ախալցիխեի փաշայի օգնությամբ Իմերեթիի գահ բարձրացրեց սեփական որդուն:

բ) Անհաշտ պայքար էր մղում Նադիր-Շահի դեմ:

գ) Տարբեր ժամանակաշրջաններում զբաղեցրել է ինչպես Կախեթիի, այնպես էլ Քարթլիի գահը:

դ) Անձամբ մասնակցում էր իրանցիների արշավանքներին Աֆղանստանում և Հնդկաստանում:

(1) **16. Ի՞նչն է կապված Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ի հետ:**

ա) Բուլղարիայի ազատագրումը,

բ) Ռեչ Պոսպոլիտայի բաժանումը,

գ) Ֆինլանդիայի նվաճումը,

դ) Ավստրիային պարտությունը:

(1) **17. Ի թիվս այլ պատճառների, ի՞նչը նպաստեց գեներալ Բոնապարտի վերելքին XVIII դարի 90-ական թվականներին:**

ա) Ռոյալիստական ապստամբության ճնշումը Վանդեայում,

բ) Ենայի ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը,

գ) Էլզաս և Լոթարինգիա պատմական մարզերի վերադարձը,

դ) հաջող արշավանքը հյուսիսային Իտալիայում:

(1) **18. Ի՞նչ պայմանով էր փոխանցվում հողը գյուղացիներին XIX դարի 60-ական թվականներին Վրաստանում ճորտատիրության վերացումից հետո:**

ա) անհատույց, սակայն փոխարենը նա պետք է աշխատեր նաև տիրոջ հողի վրա,

բ) նվիրատվության, նա ազատվում էր նաև բոլոր պարտավորություններից,

գ) հետգնման, իսկ մինչ այդ նա համարվում էր ժամանակավորապես պարտավորված,

դ) համօգտագործման, կալվածատիրոջ հետ համատեղ դառնում էր հողի սեփականատեր:

(1) **19. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ 1919 թվականին Բաթումիում տիրող իրավիճակի վերաբերյալ:**

ա) Քաղաքում տեղակայված էին բրիտանական զորքի ստորաբաժանումները: Այն ղեկավարում էր բրիտանացի գեներալ Կուկ-Կոլլիսը, որը զբաղեցնում էր գեներալ-նահանգապետի պաշտոնը:

բ) Քաղաքում ի սկզբանե օսմանական զորքն էր տեղակայված, սակայն գեներալ Մազնիաշվիլին վտարեց նրանց և կառավարումը հանձնվեց տեղական ինքնակառավարմանը:

գ) Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո գերմանական բանակը լքեց քաղաքը և կառավարումը հանձնվեց Վրաստանի հիմնադիր ժողովի կողմից նշանակված գեներալ-նահանգապետ Բենիա Չխիկվիշվիլիին:

դ) Մուդրոսի զինադադարի պայմաններով Բաթումին հռչակվեց ազատ քաղաք և կառավարիչ նշանակվեց Ազգերի լիգայի մանդատ ունեցող Ֆրանսիայի գերագույն հանձնակատար Աբել Շեվալյեն:

(1) **20. Գերմանիայի կառավարության ո՞ր որոշումն էր խախտում Վերսալի հաշտության պայմանագրի պայմանները:**

ա) Դանցիգը որպես ազատ քաղաք հռչակելը,

բ) զորքերի մուտքը Ռեյնի ապառազմականացված գոտի,

գ) Ռայխսպրեզիդենտի պաշտոնի ներմուծումը,

դ) Ռայխսվերի վերափոխումը Բունդեսվերի:

(1) **21. Ո՞ր տարածաշրջանի գրավումն էր նախատեսում Գերմանիայի ռազմական ղեկավարության կողմից 1942 թվականին մշակված «Էդելվայս» պլանը:**

ա) Ղրիմի թերակղզու,

բ) Կովկասի,

գ) Կենտրոնական Ռուսաստանի,

դ) Մերձբալթյան երկրների:

(1) **22. Ո՞րն էր Միխայիլ Գորբաչովի սկսած, այսպես կոչված՝ «Պերեստրոյկա»-ի նպատակը:**

ա) Արմատապես փոխել կառավարման համակարգը, ընդլայնել դաշնակից հանրապետությունների իրավունքները և դրանով հաղթահարել քաղաքական առկա ճգնաժամը:

բ) Կոմունիստական կուսակցությունը վերածել սոցիալ-դեմոկրատական տիպի կազմակերպության և ավելացնել Սովետների դերը, որը պետք է ապահովեր ԽՍՀՄ-ի պահպանումը:

գ) Սահմանադրությամբ հավասարեցնել ինքնավար հանրապետությունների կարգավիճակը դաշնակից հանրապետությունների հետ՝ այդ կերպ ուժեղացնելով խորհրդային պետության պահպանման կողմնակիցներին:

դ) Երկարաձգել ԽՍՀՄ-ի գոյությունը քաղաքական և տնտեսական բարեփոխումների միջոցով, որոնք չէին վերաբերում պետության գոյության հիմնական սկզբունքներին.

Հրահանգ № 23-26 առաջադրանքների համար

Ժամանակագրական կարգով դասավորեք պատմական իրադարձությունները: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն նշված իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **23. Ժամանակագրական կարգով դասավորեք Ասորեստանի պետության հետ կապված իրադարձությունները:**

1. Աշուրբանիպալի կողմից գրադարանի հիմնումը Նինվեում
2. Թիգլաթպալասար I-ի արշավանքը Նաիրյան երկրներ
3. Դուր-Շարուկինի կառուցումը Սարգոն II-ի կողմից

(1) **24. Ժամանակագրական կարգով դասավորեք Սրբազան Հռոմեական կայսրության իշխող դինաստիաները՝ ըստ դրանց գործունեության ժամանակի:**

1. Հաբսբուրգներ
2. Հոհենշտաուֆեններ
3. Սաքսոններ

(1) **25. Ժամանակագրական կարգով դասավորեք միջնադարի ճարտարապետական հուշարձանները՝ ըստ դրանց կառուցման ժամանակի:**

1. Փարիզի Աստվածամոր տաճար
2. Ախենի Կայսերական տաճար
3. Սուրբ Սոֆիայի տաճարը Կոստանդնուպոլսում

(1) **26. Ժամանակագրական կարգով դասավորեք XVIII դարում Վրաստանում զարգացած իրադարձությունները:**

1. Ապստամբություն Գիվի Ամիլախվարիի հրամանատարությամբ
2. Պաատա Բատոնիշվիլիի և նրա կողմնակիցների դավադրությունը
3. Թբիլիսիի գրավումը կախերի թագավոր Կոնստանտինի կողմից

Հրահանգ № 27 առաջադրանքի համար:

Աշակերտն ունի քարտեզ: Սեփական գիտելիքների և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին:

Աշակերտի տրված պատասխաններից չորսը (4) սխալ է:

Դուք պետք է գտնեք բոլոր չորս սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 27. Քարտեզն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում


რუკის პირობითი აღნიშვნები
ქალაქი
ფრიდრიხ I-ის გადაადგილების მიმართულება
რიჩარდ I-ის გადაადგილების მიმართულება
ფილიპე II-ის გადაადგილების მიმართულება
ინგლისელთა ფლოტის გადაადგილების მიმართულება
ფრანგთა ფლოტის გადაადგილების მიმართულება
ფრიდრიხ I-ის დაღუპვის ადგილი
1 ჯვაროსანთა სახელმწიფოები
2 კილიკია
3 რომის პაპის ოლქი
4 ნავარა
5 პორტუგალია
6 საქართველო
ატლანტის ოკეანე
ჩრდილოეთის ზღვა
ინგლისი
ბალტიის ზღვა
ლანია
სალავრი
სამხრეთ სლავეთი
ყივჩაღეთი
ინგრეთი
ბულგარეთი
შავი ზღვა
ხმელთაშუა ზღვა
სალადინის სახელმწიფო
ალეპოს სასულთანო
ეგვიპტე
ქალიფატი
ალმოსავლეთ
ალმოსავლეთ
ალმოსავლეთ

Աշակերտին ուղղած հարցերը.	Աշակերտի տված պատասխանները.
27.1. Ինչպե՞ս է կոչվում քարտեզի վրա պատկերված պատմական իրադարձությունը:	27.1. Երրորդ խաչակրաց արշավանք
27.2. Ըստ քարտեզի՝ ո՞ր քաղաքի մոտ են վերջնականապես միավորվել նշված արշավանքին մասնակցող երկու զորքերը:	27.2. Ջենովայի մոտ
27.3. Ըստ քարտեզի՝ ինչպե՞ս է կոչվում այն պետությունը, որի դեմ ուղղված էր նշված արշավանքը:	27.3. Սալադինի պետություն
27.4. Ըստ քարտեզի, բացատրե՛ք, տարեթվերից բացի, ո՞ր տեղեկություններ են վկայում, որ Պիրենեյան թերակղզում դեռևս չի ավարտվել ռեկոնկիստան:	27.4. Դեռևս միավորված չեն Նավառայի և Կաստիլիայի թագավորությունները
27.5. Ըստ քարտեզի՝ ամբողջությամբ թվարկեք, թե որ պետություններից են սկսվել նշված արշավանքները:	27.5. Սրբազան Հռոմեական կայսրություն, Ֆրանսիա, Պորտուգալիա
27.6. Ըստ քարտեզի՝ ո՞ր պետությունում է ժամանակից շուտ ավարտվել Բյուզանդական կայսրությամբ անցնող արշավանքը և քարտեզի վրա նշված ո՞ր փաստն է հանգեցրել դրան:	27.6. Կիլիկիայում: Ճակատամարտում պարտություն կրելը

Հրահանգ № 28 առաջադրանքի համար:
Ուշադիր վերլուծե՛ք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Հաշվի առեք, որ բոլոր երեք նկարներում պատկերված է մեկ պատմական գործընթացի երեք դրվագ: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 28. Նկարներն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

N1

N2

N3

Բոլոր երեք նկարները վերաբերում են մեկ պատմական անձի

հարցերը տե՛ս հաջորդ էջում

Հարցեր.

(2) 28.1. Ո՞ր արտահայտությունն է կապված N1 նկարում պատկերված կոնկրետ պատմական փաստի հետ և ո՞րն էր դրա հիմքում ընկած պատճառը:

(2) 28.2. Անվանե՛ք այն պետությունը, որտեղ տեղի է ունեցել N2 նկարում պատկերված սպանությունը: Նկարում ներկայացված ո՞ր կոնկրետ տեղեկությունն է հաստատում ձեր պատասխանը:

(2) 28.3. Ինչո՞վ է պայմանավորված N3 նկարում պատկերված պատմական իրադարձությունը և կոնկրետ ի՞նչ փոփոխություն է տեղի ունեցել պետությունում այս պատմական իրադարձությունից հետո:

(1) 28.4. Նշե՛ք դասի մեկ կոնկրետ թեմայի վերնագիր, որի համար կօգտագործեք բոլոր երեք նկարները:

Հրահանգ № 29 առաջադրանքի համար:

Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 29. Պատմական փաստաթուղթն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Գեներալ Ալեքսանդրե Զաքարիաձեի նամակը

Այս նամակում, ելնելով նրանից որ այն ուղարկում եմ վստահելի մարդու ձեռքով, բացահայտորեն կանդրադառնամ որոշ հարցերի: Դուք կամ ոչնչացրեք այս նամակը, կամ պահեք այն այնպես, ինչպես գիտեք: Ինչպես տեղեկացա գնդապետից, դուք նրա հետ միասին որոշել եք հետևյալը՝

1) Վրաստան ուղարկել առայժմ մեկ՝ ամեն առումով վստահելի ու հեղինակավոր անձ: Այդ անձը ոչ միայն պետք է ծանոթ լինի մեր մշակած բոլոր ծրագրերին, այլև վերապատրաստվի ռազմական մասնագիտության մեջ այնպես, որ կարողանա ղեկավարել այնտեղ: Այս առնչությամբ բոլոր լրացուցիչ հրահանգները նա կստանա այստեղ՝ ինձանից: Թեև, ինչ վերաբերում է քաղաքական-դիվանագիտական կողմին, այն լինելու է իշխանության և անմիջապես ձեր ձեռքում, իսկ այնտեղ՝ տեղական քաղաքական կազմակերպությունների: Նա պետք է այնքան վստահելի ու պատրաստված լինի, որ կարողանա ինքնուրույն գործել, քանի որ ժամանակ առ ժամանակ կարող է չունենալ մեզ հետ կապ: Ելնելով այստեղից, ձեզ համար ակնհայտ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի նման անձ ընտրելը:

2) Նրա հետ և նրա միջոցով այլ՝ այնտեղ գործող կազմակերպությունների հետ հաստատել մշտական հուսալի կապ: Մենք այստեղ աշխատում ենք այս հարցի շուրջ և սպասում ենք այդ անձին: Նա այստեղ երկարատև ժամանակով է մնալու: Մենք այստեղ կհոգանք նրա մասին, դրա համար մի անհանգստացեք: Քաղաքականապես նրան կպատրաստեք դուք, իսկ ռազմապես և տեխնիկապես՝ մենք այստեղ: Մենք նրան այստեղ սպասում էինք, մինչև ձյան գալը: Հիմա արդեն մի փոքր ուշ է, սակայն նրան ուղարկելն

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

այլևս մի ուշացրեք: Որքան երկար մնա այստեղ, այնքան ավելի լավ: Ես չեմ ուզում կանգ առնել այն հարցի վրա, թե ինչ նշանակություն կունենա դա կառավարության և ձեր հեղինակության համար այնտեղ՝ Վրաստանում :

Նաև պետք է հավելենք, որ Ռուսաստանում մոտենում է անարխիայի պահը, նման տեղեկություններ ունենք այստեղ:Բացի այդ, մեծ գումար եք պահանջում, և դա կարող է խոչընդոտ ստեղծել: Մանավանդ, չի բացառվում, որ այս օրերին Շետցելը գնա, դա հիմա կպարզվի: Հանկարծ չմտածեք, որ այդ փաստը կխափանի մեր հարցը: Այդտեղի աշխատանքին ևս մեծ ուշադրություն են դարձնում: Դա պետք է լինի միանման նախապատրաստություն մի կողմից վստահելի մարդկանց, մյուս կողմից՝ վերջնական նախապատրաստում մարդկանց ավելի լայն շրջանակի, որը կարող է օգտագործվել մեր ապագա պայքարում:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Մարդ էլ կա, մարդ էլ, բոլորի՝ վստահելի մարդկանց հետ, անշուշտ, պետք է ծանոթանանք ու օգտագործենք իրենց համապատասխան տեղում: Դուք սա ինձնից լավ գիտեք: Միայն մի բան եմ խնդրում, առաջնորդեք ժամանողներին:

Սպա Մաթիկաշվիլին դեռ երկար կմնա այդտեղ: Հուսալի ու տաղանդավոր տղա է, կծանոթանաք ու գոհ կմնաք: Վրաստանում աշխատանքի մասին նա չպետք է իմանա հանգամանալից և մանրամասն, գոնե առայժմ: Եթե Պարսկաստանում ինչ-որ մեկն ունենք, ինձ տեղյակ պահեք:Այս հարցի շուրջ մենք այստեղ ենք աշխատում: Եթե ունեք այնպիսի հարց, որը միայն ես պետք է իմանամ, գրեք ինձ կա՛մ իմ հասցեին ծածկագրով, կա՛մ լեհերի միջոցով: Նաև զգուշացրեք ինձ, թե ում կարող եմ ասել, ում՝ ոչ: Նկատի ունեմ լեհերին ու այստեղի մեր ներկայացուցչին:

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Գնդապետ Թևզաձեն, երբ վերադառնա միայն նրան կարող եմ դիմել այս հարցերի հետ կապված օգնության համար: Բլեշչինսկին մի քանի օր այստեղ էր՝ Վարշավայում: Ես հանդիպեցի նրան: Նրան երեք հարց է հետաքրքրում.1) Այս հարցի շուրջ ում հետ կարող է ունենալ մշտական հաղորդակցություն այդտեղ ձեզ մոտ՝ Փարիզում: Իր ցանկությունն է, որ մեկ անձ լինի: Այս հարցն ինձ շատ զարմացրեց: Ես նրան պատասխանեցի, որ միայն ձեզ հետ, իսկ ձեր բացակայության դեպքում՝ պարոն Եվգենի Գեգեճկորիի հետ: Դու էիք այդպես գրում ինձ, ես էլ այդպես ասացի:

2) Ֆրանսիացիները չմտածեն, որ իբր սա ինչ-որ բոլշևիկյան բան է: Այս հարցին ես պատասխանեցի, որ դուք բավականաչափ կապեր ունեք Ֆրանսիայի կառավարության հետ նման կասկածները փարատելու համար, և նրան ևս խնդրեցի օգնել այս հարցում:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

3) Անհանգստանում էր, որ բոլշևիկները չիմանան: Սրան պատասխանեցի, որ այս առումով միջոցներ կձեռնարկեք, որ ոչ մի սադրիչ չմտնի մեր շրջապատ:

Այդտեղ գալիս է Զավիլիսովսկին՝ այստեղի կարևոր անձնաց գաղտնիքներ պահող վստահելի անձը և վարչապետի աղյուտանտը: Նա ամեն ինչ գիտի: Նրա հետ ձեզ կծանոթացնի գնդապետ Թևզաձեն: Նրա հետ սերտ կապի մեջ եղեք: Նա ազդեցիկ ու հուսալի անձնավորություն է: Ես դեռ պաշտոնական պատասխան չեմ ստացել գեներալ Ալեքսանդրե Չխեիձիից: Մասնավորապես, գիտեմ, որ ամենայն հավանականությամբ հրաժարվելու է: Ժամանակը կգա կտեղեկացնեմ: Փաստաթղթերը լավ տեղում եմ պահել:

Խորին հարգանքով՝ գեներալ Ալեքսանդրե Զաքարիաձե.

հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Փաստաթուղթ Վրաստանի պատմական արխիվից Ֆ. 2130, 1, 74, էջ 4

Հարցեր.

(1) **29.1.** Ո՞ր պետությունում է գտնվում նամակի հեղինակը, և նամակում շարադրված ո՞ր տեղեկությունն է հաստատում ձեր պատասխանը:

(1) **29.2.** Համաձայն փաստաթղթի՝ ինչո՞ւ պետք է պատրաստ լիներ Վրաստան ուղարկված անձն ինքնուրույն գործողությունների:

(1) **29.3.** Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է ընտրված անձը «երկարատև ժամանակով մնալու» գեներալ Զաքարիաձեի մոտ:

(1) **29.4.** Համաձայն փաստաթղթի՝ ո՞ր պետության հետ կապված և ի՞նչ տեղեկություններ են տարածված այնտեղ, որտեղ գտնվում է նամակի հեղինակը:

(1) **29.5.** Փաստաթղթի հեղինակը գրում է, որ պետք է պատրաստել մարդկանց լայն շրջանակ, «որը կարող է օգտագործվել մեր ապագա պայքարում»: Ըստ ձեզ, ինչի՞ համար պետք է պայքարեին ապագայում:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին

(1) 29.6. Նամակի հեղինակը գրում է՝ «Եթե Պարսկաստանում ինչ-որ մեկն ունենք, ինձ տեղյակ պահեք»: Որքանո՞վ էր հնարավոր օգտագործել Պարսկաստանն այն գործում, որի մասին գրում է Ալեքսանդրե Զաքարիաձեն: Ձեր տեսակետը հաստատելու համար բերեք փաստարկ:

(2) 29.7. Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչ են պահանջում նամակի հասցեատերը և նրա թիմակիցները մեծ քանակությամբ, և ըստ ձեզ՝ ինչո՞ւ է դա խոչընդոտ ստեղծելու: Ձեր տեսակետը հաստատելու համար բերեք փաստարկ:

(2) 29.8. Համաձայն փաստաթղթի՝ ո՞վ է երկարատև մնալու նամակի հասցեատիրոջ մոտ, ի՞նչը նա չպետք է իմանա «գոնե առայժմ» և ըստ ձեզ՝ ինչո՞ւ:

(2) 29.9. Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչ պաշտոն է զբաղեցնում Զավիլիսովսկին, և ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր անհրաժեշտ նրա հետ սերտ հարաբերություններ հաստատել:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին

(2) **29.10.** Համաձայն փաստաթղթի՝ նամակի հասցեատերն ի՞նչ միջոցներով էր պատասխան նամակ գրելու գեներալ Զաքարիաձեին, անհրաժեշտության դեպքում:

(2) **29.11.** Համաձայն փաստաթղթի՝ ամբողջապես թվարկեք, թե ովքեր պետք է փարատեին ֆրանսիացիների կասկածները, որ «բոլշևիկյան որևէ բանի» տեղիք չկա:

(2) **29.12.** Ըստ Ալեքսանդրե Զաքարիաձեի, ո՞վ էր «ամենայն հավանականությամբ, հրաժարվելու» և ըստ ձեզ՝ ինչի՞ն մասնակցությունից:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին